



Ա Պ Ա Պ Ա Ս

ԹԻՒԺ. — ԵՐԶՈՒՆ ԺԵ.

1882

ՏԱՐԻ ԺԵ. ՀՈԿՏԵՄ. 31.

## ՄԱՀԻՅ ՎԵԽԵՆԵԼԲ.

« Ամենայն ինչ կատարեա՞լ է » , ( ամեն բան վերջացած է ) ծանր ժամեր անց կոցնելուց յետոյ ասաց երբեմն Փրկիչն այնպիսի բարձր ծայնով , որ նիստները դնաց . այս այն միջոցին էր , որ շատ չարչարանքներից ու սռացած վերքերից՝ ուղաց . այս այն միջոցին էր , որ ման մօտենումէ . այս այն միջոցին էր , եթք մից բոլորովին ընկած , զգումէր , որ ման մօտենումէ . այս այն միջոցին էր , որ փառաւոր կերպով հրեշտակն եկաւ ու նորա ամեն բաշաճներին վերջ զբե՞ց :

« Ամեն բան վերջացա՞ծ է » . ինչը պէտքէ ինձ վախեցնի , եթք ցաւերս փուշի պատկ են դառել՝ զիմիս դրած , պատած : Ես պէտք է իմ Փրկչիս վերայ մտիկ տամ , որ ամենայն զերութեան շղթաները փշրումէ : Կորա յաղթութեան խօսքը թէ՝ « ամեն բան վերջացած է » , իմ մութ զերեզմանիս մէջն եւս կպայ , կհամնի :

Եթէ որ մահկանացու մարդիկո կարողանայինք մեր՝ օրօրոցի մէջն եղած ժամանակին առաջուանից տեսնել ու իմանալ մեր կեանքի մէջ մեր գլխին գալու բաներն ու մեր քաշելու ցաւերն , շատերը մեղանից՝ աւելի աւելի , մեր կեանքը մեր աչքի առաջ ու նենանալով՝ ու խը մէջ պատահելու չարիքն աւելի աւելի , ասումէմ , մեր ունենալու կեան+էց , մեր աղբեւ-ցը պէտք է սաստիկ վախենայինք ու սարսափէինք , քան թէ մեր կեանքի վերջից , որ մահ , կամ մահել ենք ասում :

Նատ անգամ նմանացրել են մարդիս կեանքը ուխտաւորի ուխտ գնալուն: Այս այնպիսի մի ճանապարհորդութիւն է, որ ոչ մեր կամքովն է սկսել եւ ոչ մեր կամքովն վերջանում: Սաստիկ շտապելով, անգագար առաջ ենք տանում մեք մեր ճանապարհն: սկսումնք մեր ճանապարհ գնալը մի առաւօտ՝ շատ շուտ՝ գեռ եւս լոյս ու մնաթքը բաժանուած, ու գեռ մութին, մեր չտեսած գիշերից գուրս ենք գալիս ու գեպ ի միւս գիշերը գնում: Մեր ջորս կողմն ամեն բան մեր աչքից ծածկուած է, ոչինչ չենք տեսնում:

Ըստէները թուզումեն, ժամերը (սահաթները) վազումեն, անց կենում, գնում մեր մօտից: Ուրախութիւնով կմնայինք մի փարք ժամանակ այն առաջին ծաղիկների առաջն, որ մեր երեխայութեան առաւաւոն, քաղցր մեզ ժպառումեն: Բայց ի զուր: Մի մեզ անտեսանելի զօրութիւն բռնի մեզ քարշումէ, կարծես զօրով պոկումէ մեզ այն տեղից ու հեռացնում: կեորուայ արեգակն արգէն գալիս է, ու խոր տարութիւնովը մեր գլուխն այրում այն ժամանակն, երբ որ չենք կարծիլ, թէ այդպէս շուտ մեր կեանքի օրը կէս օր կգառնայ: Մեր տեսնումնք պատուական շուտք, հով տեղեր, որ մեզ հրաւիրումեն, համեցէք են տնում նստելու, հովանալու, հանգստանալու: Ուրախութիւնով մի քիչ կմնայինք, դազբութիւն կառնէինք այն տեղերքը: Բայց անկարելի է, պէտք է այնտեղից գնանք, մեր ճանապարհն անգագար յառաջ տանենք, զուր ենք սինդ կպչում մեզ ուրախութիւն բերող այն բաներին, որ մեր ճանապարհին մեզ պատահումէն: Մին էլ տեսնես՝ երեկոն մօտացաւ, եւ արեւը մայր մըտաւ ու նոր գիշերը կամաց կամաց մօտենումէ: Նատ կցանկանայինք մեր այն օրուայ ճանապարհորդութիւնը վերջացնել ու հանգստանալ բայց՝ գնա՛, գնա՛ յառաջ, ասումէ մի անձանօթձայն: Մութը պատումէ արգէն մեզ ու մեր ճանապարհը, ոչինչ չենք տեսնում այլ եւս՝ ամեն լոյս հանգչումէ, ամեն բան անյայտանում: մեր զգացմնւնքները գագարումեն, ճանապարհորդութիւններս վերջացաւ, եկանք տեղ հասանք:

Այս է մեր վիճակն, ամենս եւս գիտենք: Այլ եւս չես վախենում գու, ու չես գոզում այն գիշերից, որից լոյս աշխարհք մըտար, ծնաբը, ապրեցիր, լնջի՛ ես սարսափում այն գիշերից, որ

պէտք է գայ վրագ: Քո կեանքիդ, քո գոյութեանդ այդ զարմանալի խաղը իսկ քո արած բանը չէ ի հարկէ:

Խ՞նչ է մեռնելը: — Ճրագի պէս հանգչել ինքն իրան մոռանալ վերանալ՝ Աստուծոյ աշխարհի նոր միութեան դիմելու, գնալ աւելի վսեմ հանգամանաց մէջ գոնուելու եւ կամաց կամաց յառաջանալ արարչութեան կատարելագործուելու աստիճանների մէջն:

Մեք միւս աշխարհը չգիտենք բայց կարելի եւս չէ, որ հողեղին մարդս հասկանայ, եթէ յայտնուեր եւս. ինչու որ մարդիս այս աշխարհումն ունեցած փորձառութիւններից բարձր է. եւ այն աշխարհն զգալու, կամ հասկանալու համար պէտք եղած զգայարանները չունի: Այլր ծնածին ի՞նչպէս պիտի հասկացնէիր այն հրճուանքը՝ որ զգումես, մի մշտագարուն երկիր տեսնելով, որ իւր գեղեցկութիւններովն քեզ հիացնում, կախարդումէ: Եթէ որ մի անասունի հոգին, այնպէս լինէր (այնպէս պատահէր), որ մարդկային կերպարանք ու բանականութեան լոյս ստանար (ունենար). այդ նոր մարդը սրտանց կցանկանա՞ր արդեօք, որ առաջուայ իւր անասունի վիճակին յետ դառնար ու նորից անասուն դառնար: Աւքեմն մահից, մեռնելուց ինչի՞ ենք վախենում: Ինչի՞ համար է մեր գոյութիւնն ու կեանքը, որ այժմ ունինք, այն կեանքից աւելի գեղեցիկ երեւում մեզ, մեզ՝ որ չենք մտածում թէ, եթէ մի՛ այնքան կեանք եւս որ ունենալու լինէինք ու հաստատ եւս իմանալու լինէինք, որ ինչքան ապրել ենք, այնքան եւս դարձեալ պէտք է ապրենք, բայց եւ այնպէս շատ քիչ մարդիկ կլինէին, որ մին էլ այնքան ապրել ցանկային, որքան որ ապրել են, ու կրկին անգամ տեսնէին իրանց աեսած սեւ օրերը, քաշած չքաշուելիք ցաւերը, իրանց արած մեծ սխալներն ու անխելքութիւնները եւ այն անտանելի հոգսերը, որ սիրտները օր ու գիշեր մաշումէր, կեանքները իրանց գլխին խռով անում, զրկելով թէ սրտի հանգստութիւնից եւ թէ կեանքի ամեն քաղցրութիւնից:

Մահից վախենալու երկու գլխաւոր պատճառ կայ, որ պէտք է ինքներս մեզ բացատրենք, հաշիւ տանք ու հասկանանք:

Ասուսած ինչը Առ Տարդիսին բնու-նետն (Ես-նետն) Աջ իոր առաջին է իւանիչ ցանկու-նի-նը, առաջեւ-սերը, որ շատ առաջեւ, եւ կապը էլ ինչ ուղարձ: Դորա համար վրդովիումէ եւ ընդդիմանում

մարդուս բնութիւնն այն ամեն բանին, որ մահ է առվում: Եթէ այս՝ գրեթէ անյազմելի կերպով մեր կեանք սիրելը չլինէր, եր կիրս այժմ արդէն անմարդաբնակ մի անապատ գառած կլինէր: Անթիւ անչամար վաճառքներ կայ մարդիս առաջին, որոց հետ սիտի կռուի իւր կեանքի մէջն. հաղար անգամ կռւլ գնացած կլինէր նա այդ վաճառքներին. բայց կեանք սիրելը սաստիկ ուղենարն ապրել՝ սիրտ է տուել նորան ամենադժուարին բանն անգամ տանելու: Եղել են մարդիկ, որ իւրեանց խելքիցն, իւրեանց մեղքովն՝ իրանց գլխին բերած տանջանքների պատճառովն՝ վազուց իրանց կեանքից զզուած կլինէին ու ժամանակից յառաջ եւ գեռ եւս իւրեանց հասակը չառած, կմեռնէին. բայց մուտքերեղմանի մէջ մտնելն որ միաներն են բերել սարսափել են իւրեանց մաքում գրածից, յետ են կացել եւ հաշտուել իրանց քաշած դառն օրերի հետ ու տարել են: Արդէն շատ անգամ յուսահատութիւնն, պղտորելով, խառնելով նորանց միտքը, տարել է նոցա գէպ ի կորուստի անգունդը, ու հաստատ գրած են եղել մաքներումը ու յօժար են եղել մեռելների երկիրը փախչել, գհալ ու այս աշխարհից ազատուել: բայց իսկ այն ժամանակը կեանքը աւելի քաղցր է երեւել նոցա աչքին՝ ունոր նոր յօյսեր տարով իրանք իրանց, — այն յօյսերն, որ միշտ անբաժան ընկեր են մեր կեանքի հետն, որովհետեւ մարդս միշտ յուսով է ապրում. — այդ նոր յօյսերն ասումեմ, առել են մարդի ձեռքից թուրը, որ արգէն բարձրացրած է եղել իւր վերայ՝ յուսահատութիւնից: Ասպառ-ծոյ վճիռն այնպէս է, պէտք է ապրինք, որ բարձր նշանակութիւնների համար հասունանա՛նք:

Եթէ որ սաստիկ ցանկութիւն չլինէր մեր մէջն ապրելու, մեր մահից յետոյ ունենալու կեանքն եւս եղած, կամ չեղած մի բարիք կլինէր: Բայց մեր մէջն ապրելու սէրը կայ եւ հետոն եւս այն ցանկութիւնն, որ մեռնելով յեղափոխութիւններ կրելուց յետոյ եւս՝ մեր կեանքը շարունակուի. եւ յաւիտենական կեանք ունենալու յօյսի հետ կապվում է սերտ կապով մահից յետոյ ապրելու կարեւորութեան զգացմունքը:

Բայց նորա մէջն է սխալըում մուրդու, որ իւսոնիք ուշ ունենալն մի անբնական կերպով իւսոն պանջող իւրիք է բացինում, որ նա իւր մահից առաջ ինքն իրան նեղացնումէ անօգուտ ու զուր երեւակայու-

թիւններով եւ այժմեան ունեցած կեանքին չափից դուրս գին է զնում, որ խկապէս չունի երբէք:

Նատ անգամ հիւանդու, դիւրագրգիւ զգացմունքն է, որ մեղ ցոյց է տալի մահը ուրուտկանների նման այլանգակ բաներ, որ մեղ զարհուրեցնումեն. շատ անգամ երկարատեւ ու տանջող տիսրութիւնն, որ, երբ որ աւելանումէ, անգադար մեղ չարչարումէ անհիմն ու անտեղի երկիւղ ձգելով մեր սիրոն: Ոչ թէ մահուան յեղափոխութիւններն են, որ մեղ սարսափեցնումեն, այլ այն՝ մեղ վերայ վախ ձգող՝ զարհուրելի բաներն, որ մեր մոքի առաջն գալիս, կտրումեն, պաշարումեն մեղ՝ ու մեր խելքը, կարծես, շուռ տալիս. այն՝ մեղ վրայ ահ ու սարսափ բերող՝ բաներն են, ասումեմ, որ մեր խելքը մեր գլխիցը տանումեն ու մեր մոքի ու սրտի հանգստութիւնն աւերում բոլորովին. ու այս ամեն բանի հնարողը մարդս ինքն է, որ ինքնիրան տանջելու համար այդպիսի բաներ է կրանից ստեղծում:

Մեռնողն իւր մահն այնպէս քիչ է հասկանում, ինչպէս որ սաստիկ գաղրած մարդն իւր քունի գնալը: Մեք շատ մարդ ենք տեսել, որ խելքները գլխին մահուան տնկողինքի մէջ՝ իրանց աչքը աշխարհիս փակելու բովէին էին սպասում: Նոքա այնպէս վախճանեցին, որ կարծես թէ, քնեցին, առանց երկիւղի, ինչպէս որ պիտի վախճանի ամեն մի քրիստոնեայ, որ Աստուած է հաւատում եւ իւր բարեբազդ որտումն ունի անխար յոյս իւր ամենաբարի Ատեգծողին վրայ, որին ապաւինած է: Ինչ որ տեսնումեն նորա կերպարանքի վրայ նորա մահուան անկողինքի չորս կողմը կանգնած մերձաւորներն կամ ծահօթները, վախճանուածը չգիտէ:

Նթէ որ մենք, անշունչ գիակի վրայ մտիկ աւալով, գոզումենք ու սարսափում, տեսնելով, ինչպէս պառկած է նա առանց վեր կենալու, սառած, փայտ գառած, գեղիած ու անշունչ, մեր որբալիցն անտեղեակ, իբր թէ մեր հետը չեր ապրել, մեղանից մինը չեր եղել ու մեղ երբէք չէ ճանաչել. այդ մեծ աչն ու սարսափը, որ գալիս մեր վրայ, նորանիցն է, որ մենք ինքներս խարվումենք մեր սխալ մտածելուց ու զգալուց: Երբ որ ինքներս մեղ լաւ քննումենք, լաւ հասկանումենք, որ մեք մեռելի վրայ լաց ենք լինում ու ցաւում նորա վրայ այն բանի համար, ինչ որ նա այժմ կորցրել է: Բայց նա ինքն այդ բանը չգիտէ: Մեք միտներս

ենք բերում, թէ ինչպէս նա սրտանց սիրումէր մեղ, ինչպէս կցանկանար, որ աւելի երկար ժամանակ մեղ մօտ մնար, մեղ հետ ապրէր. ինչպէս մի անյայտ ձեռք նորան մեղանից խլեց ու ու բաժանեց, ջոկեց, ու ինչպէս զուր կլինէր մեր ցանկանալը, որ նորան մեղ մօտ պահենք: Բայց մեռեն այդ բաները չգիտէ, եւ մինչեւ անգամ այնչափ, որ յայտնի չէին նորան իւր վերջին ժամերումն այն՝ սիրտ կուծեցնող զգացմունքներն, որ առողջ մարդիկն սովորաբար ունին: Նա անյայտացաւ իւր կեանքի թագաւորութիւնից ու թողեց մեղ իւր պատեանն, մի սառն արձան՝ մարդի կերպարանքավ, որն որ երբեմն սիրումէինք, որովհետեւ մէջը հոգի կար. բայց այդ մարմինը հոգու մասը չէր, այլ տարերքինն էր ու կրկին պէտք է գնարմիանալու տարերքի հետ, որաեղից որ առնաւած ու ստեղծուած էր:

Մահուան վրայ ունեցած գաղափարդ վերտծիր (դարձուր) պարզ ճշմարտութեան, ու մահուան արհաւիլքները քո աչքիդ բան չեն երեւիլ:

Նատ անգամ մեծ նշանակութիւն ենք տալիս մեր երկրաւոր կեանքի բարիքներին ու վայելցութիւններին: Մեր կեանքը մի գին միայն ունի. եւ այդ գինն այն ժամանակն է ունենաւմ, երբ որ մեր կեանքը գործ ենք գնում մեր սիրտը կատարելագործելու, մեր բանական հոգին ազնիւ ու առաքինական մոքերի մեծ պաշարով զարդարելու եւ մեղ նման մարդոց բաղդաւորելու: Եթէ որ այդ բանն այլ եւս մեր ձեռքիցն չէ գալիս եւ մինչեւ յոյս եւս չենք ունենում, որ այդ բաները կարողանանք անելու, ինչպէս պատահումէ մարդիս ծերացած միջոցումն, այն ժամանակ կեանքը կորցնումէ իւր արժէքը, եւ մի նոր կեանքի աւելի է փափակում:

Մեծ հոգու տէր մարդիկը կեանքից աւելի բարձր բարիքներ էին ճանաչում: Ով կատարեալներ. դուք այն աղնիւ ու քաջ հոգու տէր հերոսներն էիք, որ աներկիւդ մահուան առաջը գրնացիք ձեր հայրենեաց ու ազգի ազատութեան ու բարերազտութեան համար ձեր կեանքը զնելով. եւ դուք, ով առաքինիք, այն վոեմ ու անձնանուէր մարդիկն էիք, որ Յիսուսի Քրիստոսի կրօնի ճշմարտութեան համար անվեհեր սրտով Աստուծոյ սիրոյն մատաղ գնացիք ու դէպ ի ձեր գերեզմանը վաղեցիք. եւ դուք, որ մահը մի անարժան կեանքից աւելի լաւ համարեցիք —

դուք ամենդ կեանքի գինը լաւ իմացաք: Դուք ամենամաքուր առաքինութեան փափուկ գրկումը անմահ, անվախ մեռաք՝ մի երկնային գործի մէջ ձեղ վարժեցնելով: Զեր մահը շատ տևելի նախանձելի՛ էր, քան հազար ուրիշ մարդոց կեանքը: Զեր քաղցր, պատուելի ու անմոռանալի յիշատակը կմնայ յաւետեա՞ն:

Բայց ով որ ապրումէ աշխարհիս երեսին նորա համար միայն, որ մի որդինի նման սողայ ու իւր ուտելու ու խմելու բանի ետեւց ընկնի, միայն իւր փորի հոգմն անելով, առանց մտածելու, որ իւր սիրտն ու հոգին վազօրօք պիտի պատրաստի մի ապագայ աւելի աղնիւ կեանքի համար. ով որ ապրումէ նորա համար միայն, որ իւր սնափառութիւնն ու չնչին հպարտութիւնն աւելացնի ու մարդոց աչքին մեծ ոմն երեւի ու այդով կարծի՛ թէ մեծ փառքի հասած է. ով որ ապրումէ նորա համար միայն, որ ամենայն խարդախութիւն, չարութիւն, անտեղի թշնամութիւնն ու զրկանք անի, որ իւր չունեցած ոյժն ու ոչինչ մարդ լինեն ցոյց տայ, թէեւ իւր նմանների առաջին հնարագէտ, ու, գուցէ, խելօք մարդ եւս ճանաչուի. ով որ նորա համար է ապրում միայն, որ խիզճ, ամօթ, պատիւ, հոգի, հաւատ մի կողմ գրած, իւր փողը շատացնի, քաղցած ու ծարաւ չտես մեծացած լինելով որը թէեւ աջ ու ձախ ուտումէ, եւ ամեն տեղից ծծում՝ իւր միակ ցանկութեանն համեմատ՝ բայց չէ կշտանում. այդպիսի մարդը՝ կուրացած, ուրացած է կարծես, բոլորովին՝ Աստուած ու առաքինութիւն՝ որպէս եւ մարդիս բարձր կոչումը. նորա համար փողն է միայն ամենայն բան, ուրիշ ոչինչ չկայ ցանկալի. ով որ ապրումէ նորա համար միայն, որ պատիւների, աստիճանների, արժանաւորութիւնների հասնի, ուղիղ՝ թէ ծուռ ու ցած ճանապարհներով, արժանաւորութիւնով՝ թէ անարժանութիւնով. ով որ ապրումէ նորա համար միայն, որ իւր անհամեստ կիրքերին յագուրդ տայ, զուարձութիւնների ու վայելցութիւնների մէջն իւր կեանըն ու բարօրութիւնը տեսնի. — բայց այս ամենը ոչ միայն այսօր կայ, վաղը՝ չկայ ու մեզ մնալու բաներ չեն, ու մինչեւ մեր գերեզմանն անգամ մեզ չեն ճամբիլ այլ միայն մեզ շռւտով մեծ փոշիմաննութիւնով՝ գերեզման զրկելու պատճառ կլինին, գեռ մեր մահից առաջ մեզ, բարոյապէս, փաղուց մահացնելուցը ջոկ. — այս ամենն, ասումեմ, սուրբ

գրքի խօսքով, այն՝ շուտ թռչող, անցկացող բաներն են, որոց օրական աշխատանքը մի դատարկ խօսակցութիւն է: Այդպիսի մարդիկը՝ իւրեանց կեանքովն ոչ իրանց մի շահ ունեցան, ոչ ուրիշների համար. եւ այդպիսի մարդիկը, որ մեռնումեն՝ գնում, միայն խղճալու, վայ տալու արժանի են՝ իրքեւ անբազդ, թշուառ, ողօրմելի, անարժան արարածներ, որ մարդկութիւնից գուրս էին. սոքա այն մարդիկը չեն, որոց առաջինի եւ բարերար կեանքը՝ ոչ միայն գառն արտասուք է մեզ թափել տալիս եւ երկարատեւ կոկիծ պատճառում մեր սրտին, այլ եւ նոցա մահն երբէք մեր մաքիցը չէ գնում, թէեւ իւրեանց հոգւովն ու գործքով միշտ կենդանի են մեր սրտի, մեր հոգու մէջն:

Նատ անգամ եւս մեր մահից վախենալու եւ ապրել ցանկալու պատճառը միայն մեր այն մեծ հոգոն է նորանց համար, որ պէտք է մնան մեզանից յետոյ: Դող է բռնում մեզ, միտքներս բերելով մեր մահը, որ մեզ մեր ամուսնու գրկից պէտք է խլի: Մեք գողումենք մահուան առաջն նորա համար, որ մեր գերեզման մտնելուց յետոյ, պիտի գան, շրջապատեն մեզ մեր սրտին սիրելի մեր զաւակները, առանց կրթութեան՝ առանց ուսման՝ որք մնացած զաւակները, անտէր՝ անտիրական, անօգնական, անտաշտպան թողած մեր զաւակներն:

Այս է պատճառն, որ տեսնումէ մարդ, որ հասակները ցառած մարդիկը, որոնք որ անպաշտպան մնալու սրտի սիրեկանների համար հոգս անելու բան յունին, աւելի անհոգ կերպով են մեռնում, քան թէ հայրերն ու մայերը, որոց սիրտն իրանց զաւակների հետոն է, որոնցից բաժանուել չեն ուզում՝ չմեծացրած՝ ինչպէս որ իրանք կուզէին: Բայց աստեղ եւս քրիստոնեան չպիտի իւրսիրաը կոտրի: Ով հայր, ով մայր, գուշը չէիք, որ մինչեւ ցայժմ պահպանեցիք ձեր զաւակներին, Առաստած էլ պահպանողն, Խստուած է որբերի հայրը, եւ նա է ամենավերջին ու ամենափոքր արարածի բազդաւորութեան ու կեանքի համար հոգս քաշում: Եթէ ինքն կամենումէ, որ նորանց բարի լինի, լաւ մարդիկ գուրս գան, ոչ մի մարդի ոյժն չէ կարող նոցա վատացնել, փշացնել: Նորա տեսչութիւնն, Նորա Նախախնամնութիւնն, եւ ոչ թէ մարդոց կամայականութիւնն է, որ նոցա առաջնորդումէ իրանց կեանքի մէջն ու կառավարում: Եթէ որ մի ժամանակ այս աշխարհիցս քեզ կկանչի, խկոյն վեր կաց, գնա՛ քո երկ-

նաւոր Հօրդ մօտն. կգայ ժամանակը, որ քո երեխերքիդ եւս քո ետեւիցդ կըերի:

Եւ հետո դիմումը պատճառը ճանեց վախենալու այն է, որ ճարդին կան, որոց ոկրոն օգտագոյն է կըօնէ յա-կանական ճշարպութեանից:

Թէեւ, իրան է, Քրիստոսի անօւնովն ես մկրառւել, թէեւ, իրան է, զու նորան գաւանումես. թէեւ, ոզորդ է, աստուածապաշտութեան գործածական արարութիւնները զու կատարումես, բայց տեսնենք թէ, հոգւավ ու ճշմարտութիւնով եւս՝ Քրիստոսի հոգւովն ու պատուիրաններովն ես գնում՝ ու ապրում: Արդեօք քո Աստուծոյդ հետ ուղիղ սրտով հաւատարիմ մնարիվ սերտ կապով կապուած ու միացած ես: Տեսնենք թէ՝ ամեն տեղ ու ամեն ժամանակ արդարութիւնը ձեռքիցդ չես թողնուամ, մրտքիցդ, սրտիցդ չես ձգում: Արդեօք այնքան բարի բաներ անումեն, որչափ որ ձեռքիցդ կգար: Տեսնենք թէ՝ թշնամիներիդ հետը հաշտուած ես, կամ նորանց ներած ես, կամ նորանց քեզ արած վասութիւնի տեղը՝ լաւութիւն արած ես: Արդեօք՝ միտքդ բերելով քո ծածուկ արած՝ քեզ ամօթ ու նախատինք բերող մի գործդ, խիզճդ քեզ չը ատնջում ու գատապարտում:

Ճշմարիտ բարեպաշտ մարդն՝ Աստուծոյ զաւակն է աշխարհիս վրան: Ազքը յաւիսենական կեանքի վերայ գրած, ձեռքը լաւութիւններ անելու բաց, հանգիստ ու հանգարտ գնումէ նա իւր կեանքի ճանապարհն մրրիկների ու փոթորիկների միջով, երջանիկ ճանաչելով իրան այն ուրախութիւնների մշջն որ Աստուծ իրան պարզեւումէ: Աւ մարդիս ունեցած հաւատքի արժանաւորութիւնն ոչ մի ժամանակ այնպիսի բարերար պայծառութիւնն չէ երեւում, ինչպէս մահուան ժամին. այս ժամանակն է յայանվում իւր հաւատի Աստուծանից ճնած, յառաջ եկած, Աստուծանից ծագած լոյս լինեն իւր սրտի ու հոգու մէջն, նորա՝ զարմանալի բորձը զգացմունք ու համոզմունք լինելը, նորա՝ սաստիկ երջանկացնող զօրութիւնն: Մի աղնիւ քրիստոնէի մահուան անկողինքն շատ անգամ ամենամեծ օրհնութեան տեղ է զառնում՝ թէ իւր ժամանակումն ապրող եւ թէ իրանից յետոյ աշխարհումն բնակուող մարդոց համար:

Բայց զգայական կեսնքով միտին ապրող մարդու, երբ որ միտքըն է գալիք թէ մահ կայ, մեռնել կայ, սարսափելի կերպով ըգգումէ, որ իւր հոգւայ մեջ բան չկայ, որ իրան յոյս տայ, կամ

ուրախացնի. գատարկ է իւր հոգին, մինակ մնացած, օտարականի նման։ Այն ի՞նչ հոգի է, որ պիտի զրկուի այսուչետեւ այն ամեն բանից, ինչ որ իրան մինչեւ ցայդմ միայն կարումէր ամենայն կերպով ուրախացնել։ Նա երբէք չէր մտածել որ մի աւելի բարձր կոչումն ու նշանակութիւն ունի. ուրեմն ի՞նչ պիտի լինի նորան, որ այնուշետեւ պիտի կորցնի մինչեւ ցայդմ իւր ճանաչած ու գին գրած միակ ուրախութիւններն։ Ինքն կերթայ, գերեզման կմտնի ու իւր ետեւիցն պիտի մնան ամենայն ուրախութիւններն, ու վայելչութիւններն ու ամեն բան, ինչ որ իւր սրտին գիւր էր գալիս. այլ եւս չպիտի վայելի պատուական ճաշերն ու խնճոյքներն, այլ եւս չպիտի ունենայ իւր պատուաւոր աեղերն ու աստիճանները, իւր թանկագին հագուստները, իւր հաւաքած մեծ փողն՝ բերած շահերովն, որ վայելչութիւններ սիրող ցանկասէր ու իւր անկուշտ ժառանգները պիտի տակից տան ու վրայից գուրս գան, անխնայ փչացնելով։ Իւր գրանն երբեմն կանգնած ողորմութիւն հաւաքող աղքատից տւելի աղքատացած, վիզը ծռած, կանգնած է յաւիտենական աշխարհի գրան առաջին. ոչինչ չունի նա, գլխից մինչեւ ոտքն ողորմելի աղքատ է, իւր ամէն ունեցած, չունեցածը կորցրել է։

Ով խզմնանքի քաղցր հանգստութիւն, գու, որ իմ սիրան ու հոգին սերտ կապով կապումես Ամենաբարձրեալ Ստեղծող երկնաւոր Հօրս հետ. չինի թէ երբ եւ իցէ ինձանից հեռանաս։ — Վայ նորան, ով որ այն ժամանակն է քեզ միտքը բերում ու գալիս՝ քեզ ընկնում, երբ որ ուրիշ ամեն բան ձեռքիցը գնացել է. վայ նորան, որի աչքն այն ժամանակն է լաւագոյն աշխարհ-քը տեսնում, երբ որ այս աշխարհս իւր աչքիցն անցայտանումէ, կարծես, իւր ոտքի տակիցը փախչելով։

Ինձ եւս ովի իմ Աստուած, ինձ եւս մի որ քեզ մօտ պէտք է կանչես, երբ որ ժամանակո կգայ։ Երանի վնձ, եթէ որ այն ժամանակն մոքիցս անցկացնել կարողանամ թէ լու պատերազմը պատերազմէց։ որչափ որ իմ ոյժս կհասնէր, մի բարերար կեանք եմ ունեցել, մի լաւ ընթացք կատարել. ինչ ևս ճառ-ճ որտնալ յա-իտենական կեանով պատի։

Եւ երբ որ վերջին ժամն կտայ ինձ մահուան ամեն դառնութիւնների, փորձութեան վերջին բաժակն, երբ որ իմ փայտացած ձեռքս օքչնել չէ կարող իմ սիրականներիս, որ իմ հոգիս

աւանդելու բարձիս վերայ աղի արտասունք կթափեն իմ՝ իրանցից հեռանալուս համար. երբ որ իմ բերանս զմրուած, փակուած՝ էլ չեմ կարող իմ վերջին շնորհակալութեան խօսքս կմկմալով ասել նորանց, որոնց մինչեւ իմ մահս իմ վերայ հարազատ ոէր ունեցան. երբ որ աշխարհիս ձայն ու ձունն ու մարդիս սրտին ախորժելի ձայներն իմ ականջիս էլ չեն լսուելու, այն ժամանակն՝ այն ժամանակը Քո ձեռքդ կաւանդեմ իմ հոգիս: Ուրախ ու գոչ սրտով վերեւ կծգեմ իմ փակուող աչքերս դէպի Քեզ եւ Քո ողօրմութիւնիդ կյանձնեմ ամենին, որոնք թանկ են իմ սրտիս, Քո հովանաւորութեանդ տակը լինին: Դու կմնաս նոցա համար, ինչպէս որ ինձ համար եւս մնումես յաւիտենական կեանքի գաշաերումն:

(Պատճ.)

Գ. Ե. Ա.

**ԱՇԾԵ** ամեն մի փոքր ի շատէ զարդացած ժողովրդի պարտականութիւնն է հետաքրքրուիլ և ծանօթանալ իւր զրացի ժողովրդի ազգային և կրօնական կեանքին, սովորութիւններին և վարք ու բարքին, իւր զրացիական յարաբերութիւնները զիտակցական և նպատակայարմար անելու համար, ևս առաւել հարկ անհրաժեշտ է մեզ՝ Առվիասեան Հայերիս մանաւանդ իներկայումն՝ հետաքրքրուիլ և ծանօթանալ մեզ հետ բնակակից Առվիասարնակ Առուսների ազգային և կրօնական կեանքին ու պատմութեանը, որոց կենական պահանջները շահէրն ու վնասները միև նոյն մերը զարձան այն օրից, երբ նոքա ոտք զրեցին Առվիասեան երկրները:

Ըստ այժմ՝ «Երարատ»ի ընթերցողաց ծանօթացնելու համար թէ 988 թուականից, երբ Առուսները ընդունեցին քրիստոնէական կրօնը, մինչև ցայսօր—այս 894 տարուայ ընթացքում որբան ազանդներ և ինչպէս ծագեցան նոցա մէջ, արժան ենք համարում շարունակաբար հրատարակել «Երարատ»ի թերթերում Դօքքոտվօրսկի պլոֆէսորի՝ Առուսների մէջ ծագած այլ և այլ ազանդների մասին զբած նորագոյն շարադրութիւնը, որ շատ հետաքրքրական է: